Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով գնանշման հարցման-ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02 մայիսի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Սարգսյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ն. Ավետյանը, Տ. Վարդանյանը և Տ. Բոյախչյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների (ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի բաժանարար N2 («Դամբուլներ» կոչվող հողատարածքների ոռոգման ներտնտեսային 1000մ երկարությամբ) ջրանցքի վերակառուցման, ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն - 1 պոմպակայանի 2-րդ հերթի մղման ավազան ջուր տեղափոխող D=500մմ տրամագծով, L=190գծ.մ երկարությամբ մետաղական խողովակաշարի տեղադրման և «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում IV գոտու հեռացնող ջրատարի վերականգնման և «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում III գոտու ձախ հեռացնող ջրանցքի հիմնանորոգման աշխատանքների) որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Ռիջիդ» ՍՊԸ-ն, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն, «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն և «ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ն՝ սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 26.04.2023թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ «Ռիջիդ» ՍՊԸ-ն, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն, «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն և «ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգի 1-4 չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «Ռիջիդ» ՍՊԸ -ին,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգի 1-4 չափաբաժինների համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր

կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգի 1-4 չափաբաժինների ընտրված մասնակից «Ռիջիդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Կ. Սարգսյան
անդամներ	_____	Ն. Ավետյան
	_____	Տ. Բոյախչյան
	_____	Տ. Վարդանյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան